ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

Լրատու

No. 3 Հուլիս 2011

Ոստիկանության բարեփոխումները թափ են առնում Հայաստանում

2009թ. ի վեր ԵԱՀԿ երևանյան գրասենյակը ներգրավված է եղել ՀՀ Ոստիկանության լայնածավալ բարեփոխումների գործընթացում, որը ներառում է ոստիկանության նոր ժողովրդավարական մոտեցման ներդրում: Բարեփոխումները նոր թափ ստացան 2011թ. ապրիլին, երբ սկսվեց գործնական աշխատանք մի քանի ուղղություններով:

Համագործակցության նոր համաձայնագրի հիման վրա ստեղծվել են ԵԱՀԿ-ոստիկանություն մի քանի համատեղ աշխատանքային խմբեր, որոնք աշխատում են ոստիկանության կրթական նոր համակարգի, երկրում համայնքային ոստիկանության նոր մոդելի և հասարակական կարգի պահպանման նոր մեթոդների ներդրման ռազմավարությունների վրա: Ձեռնարկված բոլոր փոփոխությունները ծառայում են մեկ վերջնական նպատակի, որպեսզի ոստիկանները "մարդկանց" տրամադրեն ծառայություն, այլ ոչ թե գործեն որպես "իշխանության" ներկայացուցիչներ:

Կոմիտաս փ. 35/3 հասցեով գտնվող ոստիկանության հենակետը 24/7 ծառայություն է մատուցում Արաբկիր համայնքի քաղաքացիներին (ԵԱՀԿ/Գոհար Ավագյան)

Այս հավակնոտ բարեփոխումները սկսելու պատճառներն ուրվագծվել էին 2008թ. Երևանում անցկացված հարցման ժամանակ, երբ պարզվել է, որ մարդիկ այն կարծիքի են, որ ոստիկանությունը հարգանքով չի վերաբերվում իրենց նկատմամբ և, որ նրանք չեն ծառայում հասարակության շահերին: Հարցման շնորհիվ պարզվեցին նաև համակարգում առկա թերությունները: Ակնհայտ էր, որ ոստիկանության նկատմամբ վստահության պակաս կար և համակարգում անհրաժեշտ էին էական բարեփոխումներ:

Գրասենյակի աջակցությամբ Արաբկիրի ոստիկանության բաժնում հաջողությամբ իրականացվել է համայնքային ոստիկանության փորձարարական ծրագիրը: Արդյունքում, համայնքի սրտում կառուցվել են երկու հենակետեր, որտեղ աշխատում են 24/7 համայնքային ոստիկաններ, որոնք համալրված են նոր տեխնոլոգիաներով և անցել են վերապատրաստում, ինչպես նաև ոստիկանության նկատմամբ ունեն արմատապես նոր մոտեցում: Տեղի բնակիչները խրախուսվում են այցելել՝ տեղեկություն ստանալու կամ օգնություն խնդրելու համար: Սա համալրում է Քաղաքացիների խորհրդատվական խումբը, որը թաղամասում տեղի ունեցող քաղաքացիների կանոնավոր հանդիպում է՝ մտքերի արտահայտման վայր, որտեղ կարելի է քննարկել համայնքային խնդիրներն ու լուծումները:

Ոստիկանության կրթական համակարգի արդիականացումը նույնպես մի ոլորտ է, որտեղ ԵԱՀԿ-ն աջակցություն է ցուցաբերում ՀՀ իշխանություններին: Հարատև ուսուցման եվրոպական մոդելի հիման վրա մշակվել է նոր հայեցակարգ ԵԱՀԿ փորձագետի աջակցությամբ: Այն նախատեսում է կրթության քառաշերտ համակարգ (նախկինում գործող երկշերտ համակարգի փոխարեն), որը ներառում է ոստիկանության տարրական վերապատրաստման 6-ամսյա դասընթաց կրտսեր սպայական անձնակազմի համար, 2-ամյա միջնակարգ կրթություն բոլոր սպաների համար, որին հաջորդում են բակալավրիատի 3-ամյա և մագիստրատուրայի 1-ամյա ուսուցում ղեկավար պաշտոնների համար: Նոր մոդելն ուժի մեջ կմտնի հոկտեմբերի 1-ից:

Ճանապարհային անվտանգության շաբաթ Հայաստանում

Մայիս ամսվա ընթացքում Երևանում մի շարք միջոցառումներ են անց կացվել՝ ուղղված ճանապարհային անվտանգության խթանմանը: Միջոցառումները կազմակերպվել էին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության (UNDPI) և ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի համատեղ ջանքերով՝ ՄԱԿ-ի կողմից հռչակված Ճանապարհային անվտանգության 2011-2020թթ. գործողությունների տասնամյակի շրջանակներում: Քարոզարշավի նպատակն է վարորդների ու հետիոտների շրջանում բարձրացնել ճանապարհային անվտանգության կանոնների մասին իրազեկությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով դպրոցականներին:

Ամսվա ընթացքում հայ դպրոցականները՝ ճանապարհային ոստիկանության աշխատակիցների հետ միասին, խորհուրդներ էին տալիս հետիոտներին ճանապարհային անվտանգության մասին, բաժանում տեղեկատվական թերթիկներ և խրախուսական նվերներ: Երեխաներին նաև հնարավորություն տրվեց մասնակցելու Երևանում հետիոտնային անցումի գծանշումների ներկմանը: Շաբաթվա վերջին 48 դպրոցականներ հնարավորություն ունեցան ստուգելու երթևեկության կանոնների մասին իրենց գիտելիքները «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» ինտերակտիվ խաղ-վիկտորինայում:

Դպրոցականները օգնում են ներկել Երևանում Հ.Քոչար փ. հետիոտնային անցումը (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

Տաջիկստանի պաշտոնյաներն ուսումնասիրում են վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացման հայկական փորձը

Տաջիկստանի կառավարությունից տասնչորս պաշտոնյաներ հունիսի 20-25-ը այցելեցին Հայաստան՝ ուսումնասիրելու վերականգնվող էներգիայի հնարավորությունները զարգացնելու քաղաքականության և օրենսդրական ու ինստիտուցիոնալ դաշտի գերակայությունները մշակելու ոլորտում Հայաստանի ունեցած փորձը: Այցը կազմակերպվել էր ԵԱՀԿ-ի Տաջիկստանի գրասենյակի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից:

Ճանաչողական այցի մասնակիցների թվում էին ԵԱՀԿ Տաջիկստանի գրասենյակի և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամները:

Այցի ընթացքում մասնակիցները հանդիպեցին պետական պաշտոնյաների, ինչպես նաև կարգավորող անկախ հանձնաժողովի, հետազոտական և զարգացման հաստատությունների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին վերականգնվող էներգետիկայի քաղաքականության, մասնավոր ներդրումների ներգրավման, սակագնային քաղաքականության և ՀԷԿ ներուժի գնահատման մեթոդների հարցերը:

Տաջիկստանի ներկայացուցիչները նաև ծանոթացան Կյոտոյի արձանագրությամբ ստեղծված Մաքուր զարգացման մեխանիզմի կիրառման հայկական փորձին, որը թույլ է տալիս երկրներին վաստակել և վաճառել արտանետումների կրճատման հավաստագրված միավորներ: ԵԱՀԿ երևանյան գրասենյակն աջակցել է Հայաստանի ներգրավմանը այդ մեխանիզմում:

Տաջիկստանի պատվիրակությունը ծանոթանում է Աղստև գետի փոքր ՀԷԿ-ի շահագործմանը, 2011թ. հունիս (Բիլորոմ Սաֆրովա)

ԵԱՀԿ գրասենյակը նպաստում է Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի իրականացմանը

2002 թվականից Գրասենյակն աջակցում է 15 Օրհուս կենտրոնների գործունեությանը, որոնք գործում են Հայաստանի գրեթե բոլոր մարզերում: Այս կենտրոնները դարձել են ազգային օրենսդրության կիրարկման հիմնական մարմինները՝ նպաստելով շրջակա միջավայրի ոլորտի արդյունավետ կառավարմանը և պայմաններ ստեղծելով հանրային արդյունավետ մասնակցության համար:

2011թ. գրասենյակը շարունակել է աջակցություն տրամադրել ՀՀ կառավարությանը՝ ուղղված Օրհուսի կոնվենցիայի իրականացման մարտահրավերների լուծմանը: Մայիսի 20-ին Երևանում տեղի ունեցած կլոր սեղանի քննարկումը, որի նպատակն էր գնահատել Հայաստանում դրա իրականացման ընթացքը, Գրասենյակի աջակցությամբ կազմակերպվել էր "Թրանսֆերենսի Ինքերնեշընլ" հակակոռուպցիոն կենտրոնի և Հայաստանի Հետաքննող լրագրողների ընկերակցության կողմից: Քննարկմանը մասնակցում էին քաղաքացիական հասարակության, պետական հաստատությունների, Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության և միջազգային ու դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ: Մասնակիցները պատրաստ էին միավորել իրենց ջանքերը՝ Կոնվենցիայի իրականացմանը նպաստելու և ապահովելու, որպեսզի հասարակության անդամներին տրվեն համապատասխան հնարավորություններ՝ արդյունավետ կերպով բնապահպանական հարցերի մասով որոշումների կայացմանը մասնակցելու համար:



Հանքարդյունաբերության աշխատանքներից առաջացած աղտոտումը Գրասենյակի ուշադրության կենտրոնում է, Ալավերդի, 2010թ. դեկտեմբեր (ENVSEC/Վիկտոր Մելո)

Հակակոռուպցիոն ուսանողական արշավ Երևանում և Գյումրիում

Գրասենյակի կողմից աջակցվող Ուսանողական հակակոռուպցիոն աշխատանքային խումբն ամփոփեց համալսարաններում իրազեկության բարձրացման քարոզարշավի առաջին փուլը: Խումբը ուսանողական համայնքի համար կազմակերպեց մի շարք զեկույցներ կոռուպցիայի ընկալման մասին վերջին հետազոտության եզրահանգումների վերաբերյալ: Զեկույցներին հաջորդեց կոռուպցիայի, բուհական բարեփոխումների և Բոլոնիայի գործընթացի հետևանքների վերաբերյալ քննարկում: Ուսանողական հակակոռուպցիոն աշխատանքային խումբն այժմ պատրաստվում է կարգախոսի մրցույթի և հակակոռուպցիոն համապարփակ ուսանողական արշավի, որը նախատեսվում է 2011թ. աշնանը:

Տնտեսական և բնապահպանական ուղղությունը այն երեք հարթություններից մեկն է, որտեղ գործում է ԵԱՀԿ-ն: Տնտեսական բարեկեցությունը կայունության հիմնաքարերից մեկն է, իսկ բնապահպանական վտանգները սահմաններ չեն ճանաչում: Այս փաստերը այս ուղղության աշխատանքները դասում են անվտանգության հենց հիմքում: Այս ոլորտի գործունեությունը ներառում է այնպիսի նախաձեռնություններ, ինչպիսիք են փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի և փողերի լվացման, բնական պաշարների կառավարման, թունավոր թափոնների վնասազերծման և բնապահպանության հարցերում իրազեկվածության ու որոշումների կայացմանը քաղաքացիների խրախուսման ոլորտներում ԵԱՀԿ պետությունների միջև համագործակցությունը և աջակցությունը:

Անվտանգության և շրջակա միջավայրի հարցերում քաղաքացիական գործողություններ (CASE)

Անցած տարի ԵԱՀԿ երևանյան գրասենյակը աջակցել է Հայաստանում 17 CASE ծրագրերի իրականացմանը, որոնք ներառել են Գորիսում "Բնապահպանական խնդիրների շուրջ հանրային իրազեկման բարձրացում" ծրագրից մինչև Երևանի "Ուժեղ երկրաշարժերի բնապահպանական ազդեցություն" ծրագիրը: CASE-ը բնապահպանական և անվտանգության մարտահրավերները՝ իրենց կառավարությունների հետ համատեղ լուծելու դրամաշնորհային փոքր ծրագիր է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար: Նրան աջակցում է շրջակա միջավայրի և անվտանգության նախաձեռնությունը (ENVSEC):

Հայաստանում պետական արդյունավետ կանոնակարգիչ համակարգի խթանում

Արձագանքելով կառավարության խնդրանքին՝ Գրասենյակը հրավիրեց կանոնակարգիչ բարեփոխումների ոլորտում միջազգային առաջատար փորձագետ Սքոթ Ջեյքոբսին, ով արագ կերպով գնահատեց Հայաստանի գործարար միջավայրը և պետական կանոնակարգիչ կառավարման ավելի լավ համակարգ ստեղծելու գործիքները: Հիմնական եզրահանգումները նա ներկայացրեց մի շարք կլոր սեղանների ընթացքում, որտեղ մասնակցում էին կառավարության, հետազոտական հաստատությունների և գործարար համայնքի ներկայացուցիչներ: Պարոն Ջեյքոբսը եկավ այն եզրահանգման, որ Հայաստանում առկա է շատ հնացած և հակասական կանոնակարգեր, որոնք խոչընդոտում են բիզնեսի զարգացմանը, և, որ Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել կարգավորիչ գիլյոտին: Կարգավորիչ գիլյոտինը բարեփոխում է, որի շրջանակներում հաշվարկվում, վերանայվում և հեշտացվում է ազգային կանոնակարգիչ դաշտը և վերջնական հաշվով նպաստում բիզնեսի ավելի բարենպաստ միջավայրին: Գիլյոտինն իրականացվել է աշխարհի շատ երկրներում և հանգեցրել բիզնեսի գործունեության և օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելացման:

ԵԱՀԿ-ն խթանում է Հայաստանում Կանանց ռեսուրս կենտրոնները

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը շարունակում է աջակցել Կանանց ռեսուրս կենտրոններին (ԿՌԿ) Գորիսում, Կապանում և Մեղրիում, որի նպատակն է ստեղծել գործող կենտրոնների մարզային կայուն ցանց, որոնք կանանց համար կծառայեն որպես հանդիպման վայր և որպես ձեռներեցությունը խթանող կենտրոններ: Կենտրոններից յուրաքանչյուրը զբաղված է եղել 2011թ. առաջին կեսի ընթացքում:

Գորիսը ծավալել է ակտիվ գործունեություն: Կենտրոնը ընդլայնել է "հմուտ ձեռքերի" իրենց ակումբի գործունեությունը՝ ներգրավելով ավելի շատ կանանց և մշակելով նոր ապրանքներ: Նրանք նաև բացեցին ճգնաժամային կենտրոն, հիմնեցին բլոգ և հաջողությամբ հրատարակեցին մի շարք հոդվածներ, ինչպես նաև պատրաստեցին 30 տեսահոլովակներ:

Իսկ Կապանի Կանանց ռեսուրս կենտրոնը մշակել է "Բացահայտեք Կապանը" վերնագրով ճամփորդական յուրօրինակ ուղեցույց, բացել է իր բիզնեսը և շահառուների համար իրականացրել մի շարք դասընթացներ:

Մեղրիում կենտրոնը կազմակերպել է համայնքի մոբիլիզացման մի շարք քարոզարշավներ, ներառյալ՝ "Վերադառնանք մեր ակունքներին", "Ո՞չ ծխելուն", "Երեխաների միջազգային օր" և "Կանայք ու քաղցկեղը": Մեղրիի ԿՌԿ-ն նաև ստեղծել է լրագրողների ակումբ, իրականացրել 5 կին զբոսավարների վերապատրաստում, մշակել Մեղրիի տեսարժան վայրերի 3 շրջայցեր և խորհրդի կազմում ընդունել 2 նոր անդամների:

Այս ընթացքում տեղի են ունեցել ԿՌԿ-ների համակարգման երկու հանդիպումներ, ինչը թույլ է տվել կենտրոններին տեղեկություններ փոխանակել և մշակել համատեղ գործողություններ: Բացի այդ, կենտրոնների երկու ներկայացուցիչներ մասնակցել են Առաջնորդների համաշխարհային բաց ծրագրին, որը տեղի է ունեցել մարտի 28-ից ապրիլի 7-ը ԱՄՆ-ում, իսկ Գորիսի ԿՌԿ-ի ներկայացուցիչը ներգրավված է եղել ապրիլի 29-ից մայիսի 15-ը ԱՄՆ-ում անցկացվող "Ի հայտ եկող առաջնորդներ" կոչվող ծրագրին:

Կանայք մասնակցում են Կապանի "հմուտ ձեռքեր" խմբակին, 2011թ. (ԵԱՀԿ/Կապանի Կանանց ռեսուրս կենտրոն)

Համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ

Գրասենյակը շարունակել է համագործակցությունը տեղական կառավարման մակարդակով և նոր քաղաքապետի խնդրանքով Երևանի քաղաքապետարանին տրամադրել է միջազգային խորհրդատվական աջակցություն: Սա ներառում է քաղաքի հարցերի միջազգային փորձագետի երեք ամիս տևողությամբ խորհրդատվությունը բազմաթիվ հարցերում՝ կապված աղբի վերամշակման, համատիրությունների, ֆինանսական վերահսկողության, տնտեսական զարգացման, պետություն-մասնավոր հատված գործընկերության, ակտիվների կառավարման և գնումների հետ:

Երևանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը բարձր է գնահատել համագործակցությունը ԵԱՀԿ գրասենյակի հետ և ավելացրել. *«Քաղաքապետարանի աշխատակազմի մասնագիտական աճին ուղղված ծրագրերը, որոնք կզարգացնեն նրանց հմտությունները ու կարողությունները շատ կարևոր են մեզ համար: Դրանք արդեն իսկ տվել են դրական արդյունքներ և մենք ակնկալում ենք, որ մեր համագործակցությունը կշարունակվի ապագայում նաև այլ բնագավառներում»:*

Հիմնական տարրերից մեկն էր անձնակազմի վերապատրաստման կարիքների համապարփակ գնահատումը, որը հիմք կդնի քաղաքապետարանի անձնակազմի վերապատրաստման հետագա ծրագրերի մշակման համար:

Վերապատրաստման դասընթացների շարքը, ինչպես նաև փորձի փոխանակման հնարավորությունները նախատեսված են 2011-2012թթ. համար:

Բացի այդ, գրասենյակը զբաղվել է Երևանի քաղաքապետարանին դոնորական աջակցության համակարգմամբ և կազմակերպել է հավանական դոնորների համատեղ հանդիպում քաղաքապետի հետ:

(Ֆոտոլուր/Մելիք Բաղդասարյան)

Երեխաների միջազգային օրը

Հունիսի 1-ի Երեխաների միջազգային օրվա կապակցությամբ ԵԱՀԿ երևանյան գրասենյակը բժշկական սարքավորումներ է նվիրել Երևանի պետական բժշկական համալսարանի "Մուրացան" հիվանդանոցին, որը մասնագիտացած է արյան հետ կապված խնդիրներ ունեցող երեխաների բուժման հարցերում:

Նվիրատվությունը, որ նաև ներառում է խաղալիքներ և գրենական պիտույքներ, հնարավոր է դարձել ԵԱՀԿ բարեգործական պարահանդեսից ստացված միջոցներից: Բժշկական սարքավորումները ներառել են ներարկման համակարգ, պլազմայի համար ջրային բաղնիք, օքսիմետր և հեմոգլոբինի չափիչ:

Այցելություններ

Առուդրոնիուս Աժուբալիս
Լիտվայի արտաքին գործերի նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ
17-19 մարտի

Պետրոս Էֆթիմիու
ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ
9-11 մայիսի

Յանեշ Լենարչիչ
ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրեն
9-10 մարտի

Դասընթացներ

Հասարակայնության հետ կապեր և ՊՆ
Ապրիլի 26-27-ը գրասենյակը ՊՆ-ի տեղեկատվական ծառայության համար կազմակերպել է հասարակայնության հետ կապերի թեմայով դասընթացներ, որոնք ներառել են ԶԼՄ-ների և լայն հասարակության հետ փոխգործակցության ինտերակտիվ և գործնական վարժություններ:

Հավաքների ազատություն
Քաղաքական կուսակցությունների, քաղաքապետարանների և դատավորների մոտ 50 ներկայացուցիչներ հունիսի 20-22-ը մասնակցել են հավաքների ազատության թեմայով սեմինարների:

Քաղաքացիական ծառայության դասընթացներ
Գրասենյակն աջակցել է քաղաքացիական ծառայողների ամբողջականության և հակակոռուպցիոն ուղենիշների ու ուսուցողական մոդուլի վրա հիմնված տարեկան վերապատրաստման հարցում:

Միջոցառումներ

Փետրվարի 17-ին Գրասենյակի հետ համատեղ կազմակերպվեց քննարկում կրոնի կամ համոզմունքի ազատության մասին Հայաստանի օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

Փետրվարի 22-ին գրասենյակի հետ համատեղ կազմակերպվեց բանակում մարդու իրավունքների պաշտպանությունը և ոլորտում միջազգային փորձը թեմայով քննարկում:

Մարտի 10-ին ԺՀՄԻԳ հետ համատեղ կազմակերպվեց միջազգային համաժողով՝ քննարկելու 2008թ. Հայաստանում ընտրություններին հաջորդած բռնության հետ կապված դատավարությունների վերաբերյալ առաջարկությունների իրականացման գործընթացը:

ԵԱՀԿ աջակցությամբ պատրաստված մոնիտորինգի զեկույցը ուրվագծում է ձերբակալվածներին պահելու վայրերի /ՃՊՎ/ վերաբերյալ արված առաջարկությունները

Հունիսի 20-ին ՀՀ ոստիկանության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մասնակցեցին "Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան" կազմակերպության կողմից Կոնգրես հյուրանոցում կազմակերպված քննարկմանը, որի ուշադրության կենտրոնում էր հասարակական դիտորդների խմբի զեկույցը: Խումբը ստեղծվել է 2006թ. ՀՀ ոստիկանության պետի հրամանագրով:

Հասարակական դիտորդների խմբի դերը շատ կարևոր է. այն էական դեր է խաղում ՀՀ ոստիկանության ՃՊՎ-ները ազգային օրենսդրության և մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու գործում: Մասնավորապես, նրանց աշխատանքը ներառում է Հայաստանի տարբեր ՃՊՎ-ներ այցելություններ, երբ գնահատվում են պահման պայմանները, ինչպես նաև բժշկական ծառայությունները, որոնց արդյունքները ամբողջությամբ ներկայացվում են տարեկան զեկույցում:

Քննարկումը կազմակերպվել էր հասարակական դիտորդների խմբի տարեկան զեկույցը ներկայացնելու նպատակով, որում ուրվագծվել էին մի շարք խնդիրներ, այդ թվում՝ բուժանձնակազմի բացակայություն, սննդի անբավարար չափաքանակներ և վատ պայմաններ՝ կապված որոշ վայրերում խոնավության, օդափոխության և լուսավորության հետ: Սակայն կարևոր է նշել, որ զեկույցում նաև արձանագրված էին որոշակի բարելավումներ, ինչպիսիք են վերանորոգումը և ավելի լավ ջեռուցումը ոստիկանության որոշ ՃՊՎ-ներում:

Հաջորդած քննարկումը հնարավորություն տվեց ինչպես ոստիկանությանը, այնպես էլ ներկայացված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին արձագանքել զեկույցի եզրահանգումներին՝ հարցեր ուղղելով հեղինակներին և ոստիկանության ներկայացուցիչներին: Ոստիկանությունը օգտվելով առիթից ողջունեց զեկույցը և պնդեց, որ խնդիրներից շատերը կա մ արդեն լուծված են, կա մ էլ կբարելավվեն մոտ ապագայում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և ԶՈՒԺՎ/DCAF զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ձեռնարկը թարգմանվել է հայերեն և տպագրվել գրասենյակի կողմից ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի աջակցությամբ:

Փաստաբանների պալատի և անկախ փորձագետների կողմից՝ Գրասենյակի աջակցությամբ ուսումնասիրվել և տպագրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացը Հայաստանում:

"Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները" սոցիոլոգիական հետազոտությունը թարգմանվել է անգլերեն և հրատարակվել գրասենյակի աջակցությամբ:

ՁԼՄ-ների բարեփոխումները՝ ԵԱՀԿ-ի ուշադրության կենտրոնում

Անցյալ տարի ՀՀ Կառավարությունը ապաքրեականացրել է զրպարտությունը, որը նշանակալի քայլ էր հանրապետությունում ՁԼՄ-ների ազատությունը բարձրացնելու ուղղությամբ: Սակայն վերջին մի քանի ամիսների ընթացքում զրպարտության հատկանիշներով դատական գործերի թվի աճը, որոնց արդյունքում վնասների համար խոշոր գումարներ են նշանակվել, լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Ս.թ. մարտ ամսին ՁԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը մտահոգություն արտահայտեց որոշ դեպքերի կապակցությամբ, երբ մինչև 12,500 եվրոյի հասնող գումարներ էին տրամադրվել բողոքող կողմերին:

Իրավիճակը բարելավելու նպատակով հունիսին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ «Իրավունքի Եվրոպա Միավորում» կազմակերպությունը ՀՈԴՎԱԾ 19-ի (Մեծ Բրիտանիա) հետ միասին կազմակերպեց երկօրյա ուսուցողական կլոր սեղան Երևանում: Սեմինարի նպատակն էր զարգացնել Հայաստանի էլեկտրոնային և տպագիր լրատվամիջոցների մոտ 20 լրագրողների գիտելիքներն ու կարողությունները և ապահովել նրանց անհրաժեշտ իրավական փորձագիտությամբ, որպեսզի նրանք կարողանան Հայաստանի և միջազգային դատական վարույթների ժամանակ պաշտպանեն խոսքի ազատության իրենց իրավունքը:

Հեռարձակման օրենսդրությունը մնում է գրասենյակի ուշադրության կենտրոնում: ԵԱՀԿ փորձագետը, որը Հայաստանի հեռարձակման օրենսդրության վերաբերյալ մի քանի փորձագիտական կարծիք է տրամադրել, ապրիլին այցելեց Հայաստան, որպեսզի ներկայացնի իր հիմնական եզրահանգումները ու քննարկի ՀԿ հանրության կողմից մշակված հեռարձակման մասին օրենքի առաջարկվող նոր նախագիծը: Նոր փաթեթն այժմ գտնվում է ՀՀ Ազգային Ժողովում:

Գիտակցելով բլոգների և լրատվության նոր տեխնոլոգիաների աճող ազդեցությունը՝ գրասենյակի աջակցությամբ դասախոսների և մարզերի լրագրողների համար կազմակերպվեցին մի շարք դասընթացներ լրատվական նոր գործիքների և տեխնիկայի մասին:

ԴԵՍՊԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԸ

"ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դառնալուն հաջորդած գրեթե չորս տարիները անշուշտ եղել են իրադարձություններով լի", - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Մերգեյ Կապինոսը, ով ավարտում է իր առաքելությունը Հայաստանում 2011թ. աշնանը: "Ես հավատացած եմ, որ այս ընթացքում մենք շատ բանի ենք հասել, սակայն դեռևս կան բազմաթիվ ոլորտներ, որտեղ հարկավոր է շարունակել աշխատանքը: Իմ իրավահաջորդին և գրասենյակի անձնակազմին մաղթում եմ շարունակական հաջողություններ Հայաստանում անվտանգության բոլոր երեք հարթությունների ամրապնդման ուղղությամբ իրականացված աշխատանքում":

ԵԱՀԿ մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը՝ ԵԱՀԿ-ն գործում է հանուն 56 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև բոլոր երեք՝ ռազմա-քաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքների ուղղություններով ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ **Սունդուկյան 64/1 հեռ. 22 96 10/11/12 էլ. փոստ՝ yerevan-am@osce.org, վեբ կայք՝www.osce.org/yerevan**